

Մեդիագրագիտության սեղանի խաղի տեխնիկական առաջադրանք

Ժամանակակից աշխարհում մեդիագրագիտությունը գրագիտության առանցքային բաղադրիչներից է: Մեդիայի զարգացումը, բազմազանացումը, հասանելիությունը առաջնահերթ են դարձնում մեդիագրագիտության ուսուցումը, որի լավագույն ձևերից մեկը խաղերի միջոցով ուսուցումն է:

Այդ նպատակով [Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը](#) և «[Հանրային լրագրության ակումբը](#)» հայտարարում են մեծահասակների համար մեդիագրագիտության սեղանի խաղի մրցույթ:

Խաղի նպատակները՝

- Մեդիագրագիտության վերաբերյալ համակարգված գիտելիքների ձեռքբերում, հմտությունների ձևավորում և հարստացում, վարքագծի փոփոխություն:
- Մեդիագրագիտության կարևորության հանդեպ մարդկանց դրական վերաբերմունքի ձևավորում: Մեդիագրագիտության դերի գիտակցում:
- Ակտիվ ու ներգրավող վերաբերմունք մեդիագրագիտության նկատմամբ:

Խաղի խնդիրները՝

Խաղը պետք է զարգացնի մասնակիցների հետևյալ գիտելիքները, հմտությունները կամ դրանց մի մասը.

1. Տեղեկության որոնում:
2. Տեղեկության հավաստիության ստուգում:
3. Տեղեկատվական անվտանգություն:
4. Մեդիա բովանդակության ստեղծում:
5. Տեղեկատվական հիգիենա, տեղեկատվության ֆիլտրում, տեղակատվական դիետա:
6. Հաղորդակցական հմտություններ:
7. Քննադատական մտածողություն:

Խաղի ժանրը և թիրախային խումբը

Խաղը պետք է լինի պարզ՝ սեղանի խաղ, նախատեսված կրթական տարբեր ցենզ ունեցող մեծահասակների համար:

Խաղը պետք է նախատեսված լինի 35-65 տարեկան մարդկանց համար: Սակայն չպետք է բացառի տարիքային այլ խմբերի հետաքրքրությունները:

Խաղի մասնակիցների թիվը 3-6 հոգի:

Խաղի տևողությունը մինչև 90 րոպե:

Խաղի առանձնահատկությունները

Խաղը պետք է ունենա մտածողության, էմոցիոնալ, սոցիալական հմտությունների և վարքագծային տարրեր: Խաղում պետք է լինեն անակնկալներ և խրախուսման տարրեր՝ հուզական ներգրավվածություն ապահովելու համար:

Խաղը պետք է ունենա հարցերի, առաջադրանքների, քայլերի բազմազանություն և բազմամակարդակություն՝ ներառելով ինչպես հեշտ, այնպես էլ բարդ հարցեր և առաջադրանքներ:

Խաղը պետք է լինի մասնակցային, ինտերակտիվ, ունենա դիդակտիկ նյութեր (օրինակ՝ քարտեր, ֆլեշ քարտեր, նկարներ, խաղադաշտ): Դիմորդներն ազատ են դիդակտիկ նյութեր առաջարկելու հարցում:

Մասնակիցները պետք է խաղան առանց խաղավարի:

Խաղը մասնակիցներին պետք է հնարավորություն ընձեռի մի քանի անգամ խաղալու:

Խաղը պետք է լինի խմբային, ունենա մրցակցային և համագործակցային տարրեր:

Խաղը պետք է ներառի մեղիագրագիտության բովանդակություն՝ միտված խաղի վերոնշյալ խնդիրների լուծմանը:

Խաղի բյուջեն և առաջարկների ներկայացման վերջնաժամկետը

Խաղի բյուջեն 5000 Եվրո է: Այն ներառում է նաև 500 տպաքանակով խաղի տպագրությունը: Հայտերը պետք է ներկայացնել մինչև 2021թ, օգոստոսի 25-ը:

Հայտերը ներկայացնելիս պարտադիր է նշել թիմի մեղիագրագիտության փորձագետ(ներ)ի անունները:

Հայտեր կարող են ներկայացնել կազմակերպությունները և թիմերը, որոնք ունեն սեղանի խաղեր ստեղծելու փորձ: